Մ Ա Ն Ր Գ Ի Տ Ե Լ Ի Ք

ԱԶԳԱՅԻՆ ԿԱՄ ՀԱՅԱԽՕՍ ԱՌԱԾՔ

Հաստ ու բարակն այ մի գին,
Վայ գայ բարակ մանողին։
Հարսանիք էրթամ, ինչ տուն տանիմ,
Մաստակ ծամեմ, ինչ կուլ տանիմ։
Հացը հացարարին տուր, մէկն էլ աւելի։
Հաւը տանը կենայ կուան ուտի։
Ձին ու ջորին կռուեցին, մէջտեղը էշը սատկեց։
Ձմեռը համամշի գառնաս, ամառը բաղմանշի։
Ձմեռվայ վարդը՝ կրակն այ։
Ձուագողը՝ ձիագող կ'ըլի։
Ձու ածան հաւը կըշկըշան կ'ըլի։
Ձուաձեղի խաթերը՝ թաւի կոթը կը պաչեն։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱԿ

ԱՆՈՒԱՆԻ ԱԶԳԱՅԻՆՔ

Քրիստոսէ 26 դար առաջ

ԹՈՐԳՈՄ

Թորգոմ կամ Թարգամ, կամ Թակլադ և կամ Տիգրան, Նոյայ Թոռնորդին կամ Թոռան Թոռն, էր հսկայ հասակով, ճարտար, տնաշէն, և խելացի Նահապետ մը, որ եղաւ նախահայր Հայոց, Վրաց, Եգերաց (Չէրքէզներու) և Կովկաս լեռանց ուրիշ բնակչաց։ Իր ժառանգութիւնն և առաջին բնակութիւնն էր բուն Այրարատեան գաւառը, ուսկից տարածուեցաւ դէպ 'ի արևելք և արևմուտք՝ Կասպից և Պոնտոս Ծովերուն միջոցը։ Այս երկիրներուն կէսը տուաւ իր ամենէն կտրիճ և խելացի որդւոյն՝ Հայկայ, կէսն ալ բաժնեց իր եօթը ուրիշ հսկայ որդւոցը, որոնց վայ իր տեղը զՀայկ Նահապետ դրաւ, և խրատեց միաբան կենալ։ Անկէ ետև կ'երևայ թէ մեռացած որդիքներուն և ստացուածքներուն անցաւ կասպից ծովէն անգին, և հայր եղաւ երկրորդ Թորգոմացւոց, որ են Թուրքք կամ Թիւրքմէնք, որոնք մինչև հիմայ զինքը կը ճանչնան իրենց ալ նահապետ։ Վերջհարիւր տարւոյ չափ տպրեցաւ այս տնտարար նահապետս, որուն անունը սուրբ գիրքն ալ կը յիշէ։

Չկայ ուրիշ ազգ մը որ կարող ըլլայ պարծիլ թէ այսպիսի հին և այսպիսի ընտիր նահապետ մը ունեցեր է, և յիշատակն ալ պահեր է քառասունը չորս դարերէ 'ի վեր։

" Յաղտա լերին նաղեցայ
,, Ու 'ի հրաբագաթին Արագած.
,, Սահմանս եդի սկայորդեացս
,, Զալիս Սպերոյ և Վերկանս։
,, Յինէն ելին գումարտակք
,, Ընդ անապատս արևելս.
,, Ժառանգութիւն Թորգոմեանց՝
,, Ճարտարութիւն, գեղ, կորով,,։

ՕԴԵՐԵՒՈՒԹԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Անդրանիկ։

Պոսնանիա, որ Պրուշի Լեհաստանին մէկ կը տորն է, զարմանալի երևոյթ մը տեսնուեր է։ Անցեալները հոն սոսկալի մրրիկ մը փրթեր է հարաւային սասակի հողմով։ Երբոր անձրևը դադարեր է՝ մեծի գեղացիք նորէն դաշտ դարձեր են մրրկի ատեն կէս մնացած գործքերնին առաջ տանելու։ Բայց մէյմէն ալ ի՞նչ տեսնեն, բոլոր տիսներուն մէջ ողջ ողջ ձկներ կը վնտան, որոնցմէ ամենէն մեծը կէս կանգուն երկայնութիւն ունի եղեր։ Ալ այն ի՞նչ ուրախութիւն եղած պիտի ըլլայ գեղացւոց, ամէն մարդ կրնայ երևակայել. ամենքը դաշտերը թափած ձուկ կը ժողովէին։

Այս բանիս պատճառը ամենեին մարդ չիմացաւ. և աւելորդապաշտք կարծեցին թէ առատ հնձոց նշան է։ Բայց ինչպէս հաւանական կ'երևայ, մրրկի ատեն թաթառ մը մոտակայ լճէ մը այս ձկներն առած այն դաշտերուն վայ ցաներ է։

ՀԱՆԵԼՈՒԿ

Ի պիտանի իրք մի բոլոր
Ի յԱրարչէն սահմանեալ փոր.
Չէ կենդանի է հոգևոր,
Զարգարութիւնն ունի 'ի խոր։

ՄԱՅԻՍԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ԼՈՒՍԻՆ։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ